Ինչու՞ ընտրել մեզ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է ավելի քան 23 տարի և ապահովագրական շուկայում ունի իր կայուն դիրքը: Ընկերության հաջողության գրավականը մասնագիտական բարձր որակավորում ունեցող անձանցից կազմված թիմն է և թիմի ներսում տիրող դրական մթնոլորտը: Ընդառաջ գնալով ժամանակի մարտահրավերներին՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ–ն իր թիմակիցների համար մշտապես ստեղծում է աշխատանքային բարենպաստ պայմաններ՝ ժամանակ առ ժամանակ տարբեր բնույթի բենեֆիթներ տրամադրելով:

Պաշտոնը՝ Ռիսկերի կառավարիչ - Ընկերությունը փնտրում է ֆինանսական ոլորտում փորձ և գիտելիքներ ունեցող անձի, ով կհամալրի Ռիսկերի կառավարչի թափուր հաստիքը:

Տարածաշրջան՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 3 և 5

Կրթություն/Որակավորում՝ Բարձրագույն, ցանկալի է ակտուարական, տնտեսագիտական կամ մաթեմատիկական

Պահանջներ՝

- Ռիսկերի, ֆինանսների, բիզնեսի կառավարման կամ հարակից ոլորտներում նվազագույնը բակալավրի աստիճան (համապատասխան հավաստագրերը (օրինակ՝ FRM, CFA) կդիտվի որպես առավելություն),
- Ապահովագրական կամ ֆինանսական ոլորտում ռիսկերի կառավարչի կամ ֆինանսական վերլուծաբանի աշխատանքային փորձ առնվազն 2 տարի,
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների լավ իմացություն,
- Համակարգչի հետ աշխատելու գործնական հմտություններ՝ MS Office (Excel, Word, Outlook) փաթեթների լավ իմացություն, տվյալների բազաների հետ աշխատանքի փորձ,
- Ռիսկերը գնահատելու և ռիսկերի կառավարման համապատասխան ռազմավարություններ մշակելու համար վերլուծական գործիքներ և տեխնիկա կիրառելու կարողություն,
- Phyton, R, PowerBI, Tablue ծրագրավորման լեզուների իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Բարդ իրավիճակները գնահատելու, լարված իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն և բարձր պատասխանատվության զգացում,
- Նախագծերի կառավարման և կազմակերպչական հմտություններ,
- Թիմային միջավայրում համագործակցելու հմտություններ:

Աշխատանքային գրաֆիկ՝ Լրիվ աշխատանքային օր՝ 09:00-18:00

Պարտականություններ՝

- Ընկերության գործունեությանը ներհատուկ ռիսկերի բացահայտում,
- բացահայտված ռիսկերի գնահատում, մոնիթորինգի իրականացում, արդյունավետ կառավարման ռազմավարության մշակում,
- ռիսկի ախորժակի, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունների մշակում,
- Ընկերության ռիսկի ընդհանուր նկարագրի մշակում և փաստաթղթավորում,

- ներքին և արտաքին միջավայրի պարբերաբար գնահատում պոտենցիալ ռիսկերի վաղ բացահայտման և գնահատման նպատակով,
- ՍՌՎԳ գործընթացին մասնակցություն, պարբերաբար սթրես թեստերի իրականացում,
- Խորհրդին, Գործադիր մարմնին, անհրաժեշտության դեպքում նաև հսկողական գործառույթներ իրականացնող անձանց պարբերաբար հաշվետվությունների ներկայացում՝ Ընկերության ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ,
- Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի վրա ազդող փոփոխությունների փաստաթղթավորում, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության պահպանմանն ու բարելավմանն ուղղված առաջարկությունների ներկայացում Խորհրդին,
- Խորհրդին մասնագիտական վերլուծությունների, ռիսկերի դիտարկումների իրականացման և այլ միջոցներով օժանդակում,
- Ապահովագրության նորմատիվ իրավական դաշտի, համապատասխանության պահանջների և ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների լավ իմացություն:

Ընտրելով մեզ ի՞նչ արտոնություններ և հնարավորություններ կստանաք Դուք.

- Առողջության ապահովագրության փաթեթ,
- Ընտանիքի անդամներին ապահովագրելու հնարավորություն,
- Տարեկան տրամադրվող վարձատրվող Day off–երի և Time off-երի հնարավորություն,
- Ընկերության կողմից սպասարկվող Visa Classic քարտ,
- Ծննդյան և նախատոնական օրերին աշխատանքը շուտ ավարտելու հնարավորություն,
- Ընկերության ներսում դասընթացների կազմակերպում, մասնագիտական փորձի փոխանակման մշակույթի առկայություն,
- Պարբերաբար թիմի որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների կազմակերպում,
- Սոցիալ–մշակութային բնույթի միջոցառումների, թիմային հավաքույթների, կորպորատիվների կազմակերպում:

Անհրաժեշտ փաստաթղթեր և դիմելու կարգը՝

Եթե համապատասխանում եք մեր պահանջներին և ցանկանում եք համագործակցել մեզ հետ, կարող եք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել **hr@silinsurance.net** էլեկտրոնային հասցեին (թեմա դաշտում պարտադիր նշել պաշտոնի անվանումը):

Վերջնաժամկետ՝ 27.08.2023թ.: